# 462 Տե՛ր, ընկածին վեր հանող Տեր,

1. Տե՛ր, ընկածին վեր հանող Տեր,
Տկարին զորացնող Տեր, ինձ գթա՛:
Տե՛ր, կույրերին աչք տվող Տեր,
Հարություն, կյանք տվող Տեր, ինձ գթա՛:
    Քեզնից անջատված՝ մահվան ձորում,
    Մթության մեջ տառապում, տանջվում,
    Բայց կրկին, Հիսո՛ւս, Քեզ եմ դիմում,
    Կենդանացրո՛ւ հոգիս, նորից կյանք տո՛ւր:

2. Տե՛ր, ների՛ր ինձ, օրհնյալ իմ Տեր,
Որ պայծառ այն լույսը Քո լքեցի:
Տե՛ր, առանց Քեզ խավար է, Տե՛ր,
Առանց Քեզ տանջվում եմ, Տե՛ր, ինձ գթա՛:
    Ծագեցրո՛ւ իմ մեջ արևը Քո
    Ու ջերմացրու արդեն սառած հոգիս,
    Բորբոքի՛ր կրկին այն սերը Քո,
    Որ հավիտյան գրկումդ հանգչեմ, Տե՛ր իմ: